

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**2018թ. II եռամսյակում ԱՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործունեության վերաբերյալ**

2018թ. II եռամսյակում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից որոշակի աշխատանք է կատարվել համակարգին վերապահված խնդիրների իրականացման ուղղությամբ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 39 առևտրային և 6 ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 94-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), իսկ 7-ի գործունեությունը՝ դադարեցվել:

3 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումներ վերցվել են պետական հաշվառման, 1 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում և 7 հիմնարկ՝ ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման:

Պետական հաշվառման են ենթարկվել նաև 215 անհատ ձեռնարկատեր, 30-ը՝ ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման, իսկ 13-ի գործունեությունը՝ դադարեցվել:

Ըստ գրասենյակների գրանցման գործընթացի իրավիճակը բնութագրվում է հետևյալ կերպ.

Անվանում	Իրավաբանական անձ			Իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ			Անհատ ձեռնարկատեր			Ընդամենը	Պետ. տուրք (հազ. դրամ)
	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ.	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ.	սկզբ.	ընթ.	գործ. դադար		
Գենտրոնական մարմին	5	17	4դ	1	1					28	186
Ստեփանակերտ	31	56	3		2		106	26	11	235	1221
Ասկերան	1	5			2		26	2		36	129
Հաղբուք	1	6			1		22			30	124
Մարտակերտ	4	2					27	2		35	162
Մարտունի	1	3					29		1	34	121
Շուշի	1						2		1	4	23
Քաջաթաղ	1	5		2	2		3			13	89
Ընդամենը	45	94	3/4դ	3	8		215	30	13	415	2055

Պետական միասնական գրանցամատյանից տրվել է 130 տեղեկանք:

Վերը նշված գրանցումների դիմաց գանձվել է 2 185 000 դրամ պետական տուրք:

Գործակալության կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում I եռամսյակում արտաբյուջե է մտցվել 297 000 դրամ:

ԱՀ Նախագահի ծրագրից բխող միջոցառումների կատարման շրջանակներում իրականացվել են նախկինում գրանցված (հաշվառված) 46 սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների՝ էլեկտրոնային եղանակով e-register.am կայքում տեղադրման աշխատանքներ:

Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել ապառիչ պատասխաններ:

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից սիստեմատիկ հսկողություն է իրականացվել գործակալության կառուցվածքային ստորաբաժանման նկատմամբ, տրվել ոլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և մեթոդական ցուցումներ: